ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

26 մայիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Տիգրան Պապոյանը, Նարինե Թորոսյանը, Ռուզաննա Թամաշյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ , Շողիկ Քառյան, Սամվել Թորոսյան.Կարինե Սիմոնյան, Սամվել Թորոսյան, Արթուր Մանուկյան , Ալավերդի համայնքի վարչական տարածքների ղեկավարներ, բնակիչներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանը

Նիստը արձանագրում էր ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիլյանը

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի մայիսի 26-ի արտահերթ թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը.

   1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի մայիսի 26-ի արտահերթ թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին.

   1.2 ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ 2025 թվականի մայիսի 13-ին տեղացած կարկուտի պատճառով տուժած քաղաքացիներին

պարարտանյութով աջակցելու նպատակով Ալավերդի համայնքի բյուջեից գումար հատկացնելու մասին.

1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 28 ապրիլի 2025 թվականի՝ ««ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» թիվ 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

1.4 Գույքի նվիրատվության մասին.

1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ ՏԵՂԱՑԱԾ ԿԱՐԿՈՒՏԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹՈՎ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման» համայնքային հանձնաժողովի կողմից կազմված՝ «Կարկուտի հետևանքով պատճառված վնասների ծավալների նախնական գնահատման» արձանագրությունը և համապատասխան ակտը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն և թույլատրել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի բյուջեից 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ հատկացնել 2025 թվականի մայիսի 13-ին տեղացած կարկուտի պատճառով տուժած քաղաքացիներին պարարտանյութով աջակցելու համար:
2. Հանձնարարել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել պարարտանյութի գնման գործընթացը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92 - Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 28 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ՝ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 28 ապրիլի 2025 թվականի՝ ««ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 67-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93 - Ա/

Լսեցին՝

ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ***/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ 2024 թվականի սուբվենցիոն ծրագրով ձեռք բերած թվով 5 ավտոբուսները՝ համաձայն հավելվածի, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ապահովել «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94 - Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ (ՌՈՅԱԼԹԻ) ԾԱԽՍՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 2-րդ կետով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման 2025 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95 - Ա/

Ավագանու անդամներ՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԷԼԲԱԿՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆԸ

_____